

ՄԱԿԴԻՐԸ ԵՎ ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՒՐԵՆ ԱՅՎԱԶՅԱՆԻ «ՃԱԿԱՏԱԳԻՐՆ ՀԱՅՈՑ» ՎԵՊՈՒՄ

«Ճակատագիրն հայոց» գեղարվեստական երկում գործածված դարձույթների՝ մակդիրների ու փոխաբերությունների ինքնատիպ դրսևորումները հարստացնում են բովանդակության նկարագրությունը՝ ստեղծելով պատկերավոր ու արտահայտիչ խոսք: Հեղինակը, համապատասխան իր ստեղծագործության բնույթին և գեղագիտական ըմբռնումներին, լեզվաոճական միջոցների նպատակային գործածությամբ ստեղծում է խոսքային իրադրություն, ընդգծում բնութագրվող առարկայի, երևույթի գեղագիտական էությունը և գեղարվեստական պատկերի բազմազանությունը:

Բանալի բառեր՝ դարձույթ, մակդիր, փոխաբերություն, պատկերավորություն, արտահայտչականություն, լեզվաոճական միջոցներ, գեղարվեստական մտածողություն, բնութագրող հատկանիշ, պատկեր:

Հայրենի եզերքի գոյապայքարի, ազգային արժանապատվության, հավատի ու լեզվի պահպանման գեղարվեստական արտացոլումն է «Ճակատագիրն հայոց» վեպը: Այն հավիտենական ազատության, հպարտ ապրելու, «այլևս թշնամուն չստորանալու» կոչ է, որն այսօր էլ իր հայրենասիրական բովանդակությամբ արդիական է և ոգեկոչող:

Վեպում հեղինակի գաղափարական-գեղագիտական բացահայտումները առանձնանում են լեզվաոճական միջոցների ինքնատիպ կիրառությամբ: Նրա արտացոլած իրականությունը, ստեղծած պատկերներն ու կերպարները դրսևորվում են յուրօրինակ երանգավորումներով՝ խոսքին հաղորդելով պատկերավորություն և արտահայտչականություն: «Արտահայտչությունը ոճի այն հատկությունն է, որ ազդում է ունկնդրի կամ ընթերցողի զգացմունքների ու տրամադրության վրա, թույլ չի տալիս նրան անտարբեր լինել խոսողի և խոսքի նկատմամբ: Այն ձեռք է բերվում առաջին հերթին պատկերների միջոցով, այսինքն առարկաների և երևույթների անուղղակի արտահայտությամբ, նրանց բուն անվանումների փոխարեն կամ սրանց հետ միասին այլ կարգի բառերի ու լեզվական միջոցների օգտագործումով, որոնք դրսևորվում են դարձույթների և բանադարձումների տեսքով»¹:

Գրողը պատկերավորության միջոցների՝ դարձույթների նպատակային գործածությամբ բացահայտում և յուրովի է ներկայացնում մարդկանց հոգեվիճակների, բախումների և ընդվզումների, դեպքերի և գործողությունների, ինչպես նաև բնության տեսարանների նկարագրությունը, օրինակ՝ «Որոտանի ամբողջ ձորը պլպլում էր սպիտակ պայծառությամբ, այնպես որ այդ ցուրտ կրակներից վառվում էին երկուսի աչքերն էլ և չէին կարողանում նայել իրար: Առաջին անգամ այդտեղ էր հանդիպել Հռիփսիմին և այդ օրվանից նրա աչքի առաջ չհնարիների մի խշշյուն պուրակ էր, մի գաղտնախոս աղբյուր, որ ծնվում

¹ Զահուկյան Է., Խլղաթյան Ֆ., Հայոց լեզու, Երևան, 1997, էջ 21:

Էր մամռոտ քարերի խորքերից, գալիս թափվում մի պղնձյա կուժ, որի սպիտակ լանջին արևը մանրացել է, և թրթռում են այդ փշրանքները. և մի քնքուշ դեմք՝ ողողված ջրի և արևի լույսով, մի գույգ խոնարհած աչքեր՝ մեջք գերվածության խորունկ վիշտ»¹:

Բերված հատվածում ընդգծված պատկերավորման միջոցները բխում են բնութագրվող առարկաների եռությունից, ունեն իմաստային խորություն և հարստացնում են խոսքի բովանդակային կողմը՝ հաղորդելով հնչեղություն և զգացմունքայնություն: Նկատելի է, որ գրողը այլաբերության տեսակների և լեզվածական արտահայտությունների ինքնօրինակ կիրառությամբ ստեղծում է ամբողջական հատվածներ, որոնցում հեղինակային վերաբերմունքով առանձնանում են հատկապես մակդրային կապակցությունները (*սպիտակ պայծառություն, ցուրտ կրակներ, գաղտնախոս աղբյուր, քնքուշ դեմք՝ ողողված ջրի և արևի լույսով, խոնարհած աչքեր՝ մեջք գերվածության խորունկ վիշտ*):

Ոճաբանական գրականության մեջ տարբեր բնորոշումներ են տրվել մակդրին, որոնք բովանդակային առումով իրարից չեն տարբերվում: Ըստ Պ. Պողոսյանի՝ մակդիրն առարկան կամ երևույթը գեղագիտորեն բնութագրող որոշիչ է, իսկ Է. Ջրբաշյանն ընդգծում է մակդիրի՝ նկարագրվող երևույթի գեղարվեստական բնորոշումը և որոշակի վերաբերմունք արտահայտելը²: Կարծում ենք՝ առավել ամբողջական և ընդգրկուն է Լ. Եզեկյանի սահմանումը. «Մակդիրը ոճական այնպիսի հնարանք է, որի միջոցով տրվում է առարկայի, երևույթի, երբեմն նաև գործողության ոչ թե հիմնական ու բնորոշ, տրամաբանական տարբերակիչ հատկանիշը, այլ նրա գեղարվեստական, պատկերավոր, գեղագիտական բնութագրությունը»³: Առհասարակ մակդիրներին բնորոշ հատկանիշն այն է, որ նրանք ունեն փոխաբերական իմաստ, որով տարբերվում են քերականական որոշիչներից՝ առարկան բնութագրելով գեղարվեստական, արտահայտչական տեսանկյունից, այլ ոչ թե սովորական, տարբերակիչ հատկանիշներով, օրինակ՝ «...անապատում հայտնվել մի բռաչափ լճակ, լճակի ափին մի կանաչ ծիլ», «...և ծննդկան հողն սկսեց երգել, ինչպես կերգեր միայն պտղավորվող հողը» (Էջ 463), «Երգում է Շամսին աչքը օտար ծորի անդավադիր մուրին» (Էջ 463), «-Թագավորություններ են ստեղծել հայերը,-ինչեց վեզիր-դիվանի-ալիի մետաղե անախորժ ձայնը» (Էջ 69), «...և վեհափառը մի պահ փակեց աչքերն ու ցնցեց ամպամած գլուխը» (Էջ 111) և այլն: Նկատելի է, որ իբրև մակդիր հանդես եկած բառային միավորները առանձնանում են իրենց ոճական արժեքով, երևույթի գեղարվեստական բնութագրմամբ՝ նկարագրությունը դարձնելով ավելի տպավորիչ և զգայական:

Մակդիրների գործածությունը վեպում հիմնականում պայմանավորված է խոսքային իրադրության առանձնահատկությամբ: Գրողն այն ավելի յուրօրինակ դարձնելու համար ստեղծում է ինքնատիպ մակդրային կապակցություններ՝ արտահայտելով իր՝ հեղինակային վերաբերմունքը, այսպես՝ «Նրա հոգին փոթորկել էր այդ լեռների անմեղ անդորրը, որ իրենք խախտեցին...» (Էջ 82), «Գահի վրա Հակոբ վեհափառն էր՝ մագաղաթե մատներով պինդ կառչած

1 **Այվազյան Ս.**, Ճակատագիրն հայոց, Երևան, 1966, էջ 218 (հետայսու այս գրքից քաղված մեջբերումների մոտ փակագծերում կնշվի միայն էջը):

2 Տե՛ս **Պողոսյան Պ.**, խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքները, Երևան, 1991, գիրք 2, էջ 44: **Ջրբաշյան Է.**, Գրականության տեսություն, Երևան, 1980, էջ 231:

3 **Եզեկյան Լ.**, Հայոց լեզվի ոճագիտություն, Երևան, 2006, էջ 234:

գահի բազկակալներից» (Էջ 116), «Ոչ ոք չէր կարող մտածել, թե Սիրապի, Բիչանադի, Գոմրիի, Արնջի, Խնձորեսկի դեպքերից հետո ոչ թե արյունոտ, այլ արևոտ լռություն պիտի լիներ, աշխատանքային խաղաղ ամառ» (Էջ 202), «Բայց անհոգ՝ մեռնող գունավոր երամի միջից տեսնում էի հեռավոր այն աշխարհը, որտեղից մի ուրիշ ավերիչ աշուն իրենց բերեց այս կողմերը» (Էջ 592) և այլն: Այվազյանի կիրառած նմանատիպ օրինակները իրենց արտացոլած իմաստային-արտահայտչական երանգներով յուրովի են բացահայտում նկարագրվող իրողության և երևույթի էությունը, ուստի դրանք կարելի է համարել անհատական-հեղինակային գործածություններ:

Ստեղծագործության մեջ առկա մակդիրները ունեն տարբեր խոսքիմասային պատկանելություն. արտահայտված են ածականով, գոյականով և բայով: Ինչպես առհասարակ, այնպես էլ այս երկում գերակշռում են ածականական մակդիրները, այսպես՝ «Ձորերում փիրուզյա մշուշ՝ մի ձորում թանձր, մյուսում մի քիչ նոսր, և ավելի նոսր» (Էջ 531), «Քաշաթաղի խստահայաց լեռներից ներքև, այնտեղ ուր երկու գետակ խառնվում են իրար, նրանց գրկի մեջ մնում է մի ընդարձակ լեռնագոգ» (Էջ 533), «Ամենայն հայոց կաթողիկոսը այլևս չկարողացավ դիմանալ այդ պղնձաձայն համագային ողբին՝ լաց եղավ երեսն ավերին դրած, ուսերը ցնցելով» (Էջ 225), «...գուլալ մի գրնգոց գրավեց Յավրու ուշադրությունը» (Էջ 104), «Համր ճանապարհ կա խանի պալատից կառափնարանը տանող, որ միայն մահ է հիշեցնում» (Էջ 433) և այլն: Նշված քերականական կառույցներում մակդիրները հանդես են եկել և՛ որակական, և՛ հարաբերական ածականներով՝ իմաստային նոր երանգներ հաղորդելով և ընդարձակելով ասելիքի էությունը: Նկատելի է, որ որակական ածականներն առանձնանում են արտահայտչականությամբ, իսկ հարաբերականները՝ ոճական ինքնատիպ արժեքով:

Բնութագրական-հուզական յուրահատուկ դրսևորումներ ունեն նաև գոյականական և բայական մակդիրները: Ինչպես Պ. Պողոսյանն է նշում, առավել ուժեղ մակդիր դառնում են գոյականները՝ առարկան բնութագրելով հատկանիշների մի ամբողջ խմբով¹: Գոյականական մակդիրները վեպում կիրառվել են այլաբանական նշանակությամբ՝ առանձնակի պատկերավորությամբ նկարագրելով և ոճավորելով երևույթը, այսպես՝ «Կիսախուժի, ներքև նայող աչքեր, կոկոն բերան, կլոր ուսի վրայով վար իջնող մի ոսկե ծամ և շուշան մատներ» (Էջ 126), «Ցուրտ քամի էր բաց ընկել դեռ ձմեռ ապրող սարերից, որ մեղմացել էր գարուն ճանապարհի վրա, դարձել բուրավետ հով» (Էջ 548) և այլն:

Համատեքստում հանդիպող դերբայական մակդիրները հեղինակի ինքնատիպ լեզվամտածողության արդյունք են, որոնք իրենց ձեռք բերած գեղարվեստական նշանակությամբ ստեղծում են բովանդակությանը համահունչ նկարագրություն, այսպես՝ «Շինական հավատացյալ մարդիկ տնից-տեղից գրկվելով՝ գենք էին վերցրել հանուն իրենց անապատված պատվի և սրբազան հայրենիքի» (Էջ 321), «Արևոտ քարերի վրա նստած էին ապստամբ հայերը քարացած գայրույթով» (Էջ 324), «Կամարակապ դիվանխանայում խոսող լռություն էր» (Էջ 357), «Մեռած ջրաշուշանը հանգիստ սահում էր ավիին մոտիկ» (Էջ

¹ Տե՛ս Պողոսյան Պ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքները, Երևան, 1991, գիրք 2, էջ 45:

783), «...և ողողված էին աչքերից ծորացող ծիծաղով» (Էջ 786): Հարկ է նշել, որ ոճական առումով խոսքին առավել դիպուկություն և պատկերավորություն են հաղորդում բայ գերադաս անդամ ունեցող դարձվածքներով ձևավորված մակդիրները, որոնք հատկանշում են առարկայի գեղագիտական էությունը, ինչպես՝ «Այդ մշուշի միջից կարմրին էին տալիս բողբոջման կրքից շիկնած այգիները» (Էջ 453), «Ձախ ձեռքում թրի դաստակն էր, աչում՝ ցուլի քղերից ոլորած մտրակը» (Էջ 324), «Կանաչների մեջ շաղ եկած առվակներն ասես սիրո գաղտնիքներ են շշնջում աղջկական շրթունքներով» (Էջ 223):

Ս. Այվազյանի գեղարվեստական երկում տեղ գտած մակդիրները բովանդակային առումով բազմաբնույթ են: Առանձին խումբ են կազմում նկարագրական և քնարական մակդիրները՝ յուրատեսակ ոճավորմամբ պատկերելով բնության տեսարանները, կերպարների արտաքին, ներքին հատկանիշները, հոգեվիճակներն ու ապրումները, օրինակ՝ «Օձասարում կանկառները այնպես են եղամակալում, որ թվում է արծաթե բազմաճյուղ աշտանակներ են ու վառվում են՝ գիշերը երկնային ցուրտ լույսերով, ցերեկը արևի դեղին շողերով... և ամեն բան բիբլիական Արարատի շնչից վեր էր ածվել բյուրեղապակյա շքեղության, գերազնիվ արծաթի և որոնք վաղուց փառքը կորցրած ու ամայացած այս տեղերում վառվում էին՝ ինչպես կանթեղները սուրբ ավերակների վրա» (Էջ 649), «...և ծխերի կապույտ ստվերները պիտի մեղմեին այս կուրացնող ճերմակությունը» (Էջ 378), «... և դեռ խիտ այգում խոնավ մթություն կա» (Էջ 253), «Իր երկաթե հոգու ընկաճվածությունը մեկիքը ամեն բանի հետ կապում, նորից ժխտում էր» (Էջ 267), «Ծեր, բարի արջը, որ վաթսուն տարուց ավելի խունկ էր արկանել, մեռն հեղել ու գրքեր թերթել՝ դրված էր արծաթե լանջախաչի վրա» (Էջ 108), «Այդ ձեռքից շափյուղա մատանին մի կաթ կապտագույն լույս էր ձգել շուրջառի գառին: Գլուխը բարձր բռնած, կաթողիկոսը, բարի, ավերված աչքերով, նայում էր պատարագի արարողությանը» (Էջ 235), «Մալանչ-մալանչ շուռ էր գալիս սև, հայրենաբույր հողը» (Էջ 527) և այլն:

Վեպում ոճական առանձնահատուկ նրբիմաստներով են դրսևորվել գուՆային մակդիրները, որոնք ընդգծում են հեղինակի անհատականությունը՝ արտահայտելով նրա հույզերն ու զգացմունքները, օրինակ՝ «Սև լուրը լույսից արագ մտավ Եղեգնաձորի, Վայոց ձորի, Վարդենիսի շեները» (Էջ 175), «Սև երկնքում ճառագեցին աստղերը» (Էջ 719): Նկատելի է, որ նշված կառույցներում մակդիրները ցույց են տալիս ոչ թե գոյականների արտաքին հատկանիշները կամ գեղագիտական բնութագրությունը, այլ հանդիսանում են տրամադրությունների ու ապրումների արտահայտման միջոց՝ ընդգծելով երևույթի կամ իրողության մռայլ ու ողբալի լինելը: Բնագրային այլ օրինակներում՝ «Կապույտ օդի մեջ արևի փոշի խառնվեց և աստիճանաբար իջավ արևոտ լեռների վրա» (Էջ 679), «Կապույտ գիշեր էր» (Էջ 251) հեղինակի գործածած կապույտ մակդիրը կարծես խորհրդանշում է այն, որ այլևս ողբերգական իրավիճակներ չկան, ամեն ինչ խաղաղ է ու հուսաբեր՝ ողողված հոգեպարար գույներով:

«Ճակատագիրն հայոց» ստեղծագործությունում իրենց պատկերավոր փոխակերպություններով խոսքին ոճական-արտահայտչական երանգավորում են հաղորդում նաև փոխաբերությունները, որոնք արտահայտված են ոչ միայն

առանձին բառերով կամ կապակցություններով, այլև ամբողջական նախադասություններով, անգամ պարբերություններով: Բերենք օրինակներ՝ «Ծորում էր հորովելը անսահման լռության մեջ: Լռություն, որ բողբոջում էր հայերից՝ հայերին» (էջ 527), «Եվ հիմա հայրենի հովը սգում էր նրանց վրա և իր անտես մատներով սանրում նրանց թուխ-մուր, ոսկեգույն, դարչնագույն քյաքուկները» (էջ 183), «Արևն ավելի կարմրեց, կաթեց ասես լեռան ուղիղ լանջի վրա ու արագ ներծծվեց, և երկիրը սևացավ, պապանձվեց աստիճանաբար, որ ավելի լավ սգան Գոմրու լեռների ծաղիկները» (էջ 183), «Արևը դեռ չէր ծնվել, հորիզոնից հորիզոն կապտականաչ լռությունն էր: Հեռավոր բարձրությունների ձնհալից վարարել էր հաչենը, մեծացել էր նրա հոխորտուն աղմուկը, բայց որը բլրորովին չէր խախտում այս լեռների անդորրը: Թվում էր, թե դա հենց լռության ու հոսող ժամանակի ձայնն էր: Մի ձայն, որ միայն հիշեցնելու համար էր, թե այս աշխարհում ամեն բան լինել չլինելու մեջ է» (էջ 678), «...և ծլի սոսափյունից, լճակի շնչից արթնանար ամբողջ անապատը: Արթնանար և դարերի թմրումից հետո ճմլկոտվեր, և դրանից էլ հղիանար, ծննդաբերեր» (էջ 463) և այլն:

«Փոխաբերությունը այն դարձույթն է, որի դեպքում առարկաների կամ երևույթների նմանեցման հիման վրա մի բառի կամ արտահայտության փոխարեն օգտագործվում է մի այլ բառ կամ արտահայտություն»¹: Փոխաբերությունը հաճախ անվանում են նաև *կրճատ* կամ *թաքնված համեմատություն*, ինչն էլ թույլ է տալիս ստեղծագործողին փոխաբերության հիման վրա համեմատություն ստեղծել, կամ հակառակը: Բայց իրենց ընդհանրություններով հանդերձ՝ փոխաբերություններն ու համեմատությունները տարբերվում են միմյանցից «...կառուցվածքային և իմաստային-արտահայտչական հատկանիշներով, հատկանիշը որևէ առարկայի վերագրելու աստիճանով և ուժգնությամբ»²:

Ոճաբանական գրականության մեջ առանձնացվում է փոխաբերության երկու տեսակ՝ *խոսքային և լեզվական*: Վեպում ավելի շատ են հանդիպում խոսքային փոխաբերությունները, որոնց գործածությամբ հեղինակը համադրում է ամենատարբեր երևույթների հատկանիշները՝ առարկան գեղագիտորեն բնութագրելու և պատկերավոր նկարագրություն ստեղծելու համար, ինչպես՝ «..... ուր քարերից աղբյուրներ են ծնվում և միանում են իրար, հոսում ձորով և ձորը մտնում է կանաչ կյանքի մեջ» (էջ 533), «Ահա փոթորկում է նժույգը փորձված յուզբաշու վրա» (էջ 431), «Մշուշված էին աչքերը չարության կծու ծխով, որ ելնում էր դավադիր մտորումներից: Այդ մշուշված աչքերի առաջ ալիքվող լեռներ էին՝ աշնան հրաշք գույների մեջ» (էջ 11):

Հեղինակը անհատական-ինքնատիպ փոխաբերություններով է նկարագրում հատկապես հայրենի բնաշխարհի տեսարաններն ու երևույթները, օրինակ՝ «Մի գիշերում բողբոջները լցվեցին բացվելու ուժով ու լուսադեմին, դեռ չծագած արևի շնչից, բաց եղան բլրի ծաղիկները» (էջ 267), «Աստղերից ու ձյուններից լույս առնելով՝ լույս էին արձակում այդ կատարները: Ձյունաբույր էր օդը, թարմ» (էջ 400), «Նհրհում էր երբեմնի քաղաքամայրը գիշերվա սև ծածկոցը քաշած վրան և նրա վրա իրենց վեհ բարձունքներից իշխում էին վանքերի ու եկեղեցիների բազմաթիվ խաչակիր գմբեթները» (էջ 115):

¹ **Զահուկյան Է.**, Խլղայան Ֆ., Հայոց լեզու, Երևան, 1997, էջ 23:

² Տե՛ս **Եգեկյան Լ.**, Հայոց լեզվի ոճագիտություն, Երևան, 2006, էջ 345:

Բնագրում հուզաարտահայտչական յուրօրինակ երանգավորումներով են դրսևորվել փոխաբերական իմաստներով արտահայտված դարձվածքները՝ խոսքին հղորդելով հուզականություն ու պատկերավորություն, ինչպես՝ «Հետո ինքն իր ձայնին չի դիմանում, սիրտը փուլ է գալիս» (Էջ 83), «Աշունները նոր ներբողներ ասացին շահին, երգիչներն իրենց սրտերից կրակ թափեցին նոր երգերով ու կատակներով» (Էջ 191), «Ինչպես տաք, հետո սառը ջուր լցնել մեկը Օրու վրա» (Էջ 565):

«Գեղարվեստական մտածողության յուրահատկությունը,-գրում է Ս. Մելքոնյանը,-բառական մակարդակում թերևս ուրիշ ոչ մի միջոցով այնքան բնորոշ ու հարուստ արտահայտություն չի կարող ունենալ, որքան փոխաբերության օգտագործումը, մասնավորապես որ բառի նման իմաստով գործածությունը հիմք է դառնում խոսքի պատկերավորության և արտահայտչականության միջոցներից շատերի համար և զանազան ձևերով սերտորեն առնչվում է դրանց հետ»¹:

Ակնհայտ է, որ Այվազյանի կիրառած փոխաբերությունները պատկերավոր ու ընդհանրական հարաբերակցության մեջ են այլ դարձույթների՝ անձնավորման, մակդիրի և համեմատության հետ: Առանձին հատվածներում նկատելի են հատկապես անձնավորման և փոխաբերության զուգորդումներ, օրինակ՝ «Ողբում էին՝ բոլոր եկեղեցիների զանգերն իրենց քառաձայն պղնձյա ողբով, մոմաբոցերն իրենց լռին թրթռոցներով, բուրվառներն իրենց շղթաների ներդաշնակ աղմկով և բուրավետ խնկածաղկով: Ողբում էին վիմափոր արձանագրությունների մետրոպայան տառերը՝ կսկծալով, որ վտանգված է իրենց դարավոր գոյությունը» (Էջ 263), «Օրն արթնանում էր այնպիսի խաղաղությամբ, ասես չկար աշխարհի վրա ցավից սեղմվող և ոչ մի սիրտ» (Էջ 783), «Գորգերի վրայից Շիրազի վարդերը թարմ-թարմությամբ էին նայում այդ լույսերի տակ» (Էջ 66), «Քարայրում շղթաները հառաչեցին» (Էջ 24): Վեպի այլ պարբերություններում փոխաբերությունն ամբողջանում է մակդիրների ու համեմատությունների միջոցով՝ խոսքը դարձնելով արտահայտիչ ու պատկերավոր, ինչպես՝ «Արևը մայր մտած տեղում ամպի կարմիր պատառիկն իսկույն սևացավ, իսկույն մեծացավ: Մի անգամ միայն պոռթկաց քամին ու ամեն կողմի վրա շաղ տվեց բալենու սպիտակ տերևները: Կորած, ինչ որ տեղ պահ մտած քամին իր հետևում թողեց բուրավետ ու կարճատև մի լռություն: Հորիզոնի ամպը լուսավորվեց, դողաց, ինչպես ճանճ կծած ձիու մեջքն ու նորից սևացավ: Բերդապարիսպի բարձր աշտարակի վրա պայթեց ամպրոպը, ինչպես թնդանոթ» (Էջ 430):

Ամփոփելով նշենք, որ մակդիրի և փոխաբերության գործածությունները «Ճակատագիրն հայոց» վեպում պայմանավորված են Այվազյան գրողի գեղագիտական մտածողությամբ: Նրա ինքնատիպ բառակերտումներով ստեղծված դարձույթներն ընդգծում, առանձնացում են նկարագրվող երևույթի, առարկայի բազմաօրինակ և պատկերավոր բնութագիրը՝ զուգակցելով թեմայի խնդիրներն ու նպատակը, խոսքի բնույթն ու հեղինակի անհատականությունը:

¹ Մելքոնյան Ս., Ակնարկներ Հայոց լեզվի ոճաբանության, Երևան, 1984, էջ 93-94:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Այվազյան Ս., Ճակատագիրն հայոց, Երևան, 1966:
2. Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճագիտություն, Երևան, 2006:
3. Մելքոնյան Ս., Ակնարկներ Հայոց լեզվի ոճաբանության, Երևան, 1984:
4. Պողոսյան Պ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքները, գիրք 2, Երևան, 1991:
5. Ջահուկյան Է., Խլղաթյան Ֆ., Հայոց լեզու, Երևան, 1997:
6. Ջրբաշյան Է., Գրականության տեսություն, Երևան, 1980:

ЭПИТЕТЫ И МЕТАФОРЫ В РОМАНЕ С. АЙВАЗЯНА «СУДЬБА АРМЯНСКАЯ» - МЕРИКАРАПЕТЯН-Вхудожественномпроизведении“Судьбаармянская”своеобразное проявление употребленных тропов, эпитетов и метафор обогащает содержание описания, создавая образную и выразительную речь. Автор, соответственно своей творческой натуре и эстетическому восприятию, целенаправленным употреблением стилистических средств создает речевую ситуацию, подчеркивает эстетическую натуру описываемого предмета, явления и разнообразие художественной картины.

Ключевые слова: троп, эпитет, метафора, изобразительность, стилистические средства, художественное мышление, описательное средство, картина.

EPITHET AND METAPHOR IN THE NOVEL «ARMENIAN DESTINY» BY S.AYVAZYANE - MERI KARAPETYAN - The specific manifestation of allegory-metaphors and epithets use in the fiction book Armenian Deztiny enriches the description of the content creating figurative and expressive speech.

The auther, appropriate to the nature of his creation and aesthetic comprehensions, creates speech situation with the purposeful use of linguistic-stylistic means, underlines the aesthetic essence of the subject and event being described and variety of artistic image.

Key words: allegory, epithet, metaphor, figurativeness, expressiveness, linguistic-stylistic means, artistic thinking, characteristics, image.